տաղաստական արդիւնք ենք սպասում Ատրպետեանի գրչից, բայց նորանից չենք կարող սպասել նուրբ բանաստեղծական աշխատութիւններ։

Ս. Թ.

ՄԿՐՏՉԵԱՆ, Լևոն։ «Ամուսնական խնդիրներ», մասն ա. Մնողք և զաւակունքն։ Ուլթաճալ, 14 էջ,—Պոլիս, տպ. 189 թ.։

Ամուսնութեան խնդիրը կեանքի ամենակարևոր խնդիրներից մէկն է։ Քանի տարօք պիտի ամուսնանալ երիտասարդը կամ օրիորդը, ինչպէս պէտք է ընտրութիւն անել, ինչ անտեսական և բարոյական նախապատրաստութիւն է հարկաւոր ամուսնութիւնից առաջ և այլն և այլն։ Նոր կազմող ընտանիքի և սպասող մանրիկների վիճակը կախուած է այն հանդամանքից, թէ ամուսնացողները որքան գիտակցաբար են մտնում նոր ասպարիզի մէջ, որքան խելացիութեամբ են դնում ընտանիքի հիմքը։ Ընտանեկան կեանքի որպիսութեանից է կախուած ամբողջ հասարակութեան վիճակը։ Եթէ մի հասարակութիւն, մի ազգ, մի երկիր նախանձելի վիճակ ունի, պատճառը պէտք է որոնել նորա ընտանիքների խելացի հիմնադրութեան մէջ։ Եթէ ազգը որ և է ժամանակամիջոցում իւր դրութիւնը վատթարացնում է, սորա ամենագլխաւոր պատճառներից մէկը պէտք է որոնել ընտանիքների անմտութեամբ հիմնելու և շարունակելու մէջ։ Իսկ եթէ մի ազգի ընտանեկան կեանքը խելացի հիմունքների վերայ է դրուած, պէտք է լուսաւ որ նա ոչ միայն չի կորչիլ, այլ և կը կարողանայ նշանաւոր քայլեր անել, եթէ ի հարկէ չենթարկուի որ և է պատմական—անսովոր ձախորդութիւնների։ Բայց նոյն իսկ ձախորդութիւնների դէպքում այն ազգը անհամեմատ աւելի շանսեր ունի յաղթող հանդիսանալու, որը լաւ է ըմբռնում ընտանիքի խելացի հիմնադրութեան նշանակութիւնը։

Ահա թէ ինչու ամուսնական խնդիրները իւրաքանչիւր փոքր ի չատէ ինքնաճանաչութիւն ունեցող ազգի մէջ ամենաէական խնդիրների շարքումն են դասւում։ Ոչ մի եւրոպական գրականութիւն զուրկ չէ ամուսնական խնդիրներին վերաբերող բազմաթիւ և բազմատեսակ աշխատութիւններից։ Բայց մեր գրականութիւնը տակաւին համարեա ոչինչ չունէ վիշեալ ճիւղին վերաբերեալ, թերևս միայն Սեդրակեանի «Ամուսնական խնդիրներ» գիրքը, որը քննում է խնդիրը եկեղեցական—իրաւաբանական տեսակէտից։ Ուստի մենք ուրախութեամբ ողջունում ենք Մկրտչեանի «Ամուսնական խնդիրներ» վերնագրով գրքուկը, որը որքան էլ անշնչան լինի իւր

բովանդակութեամբ, ալնուամենայնիւ ուրախալի երևոյթ է, որպէս գովելի ձգտումների և թարմ դատողութեան պտուղ։

Հեղինակը շօշափում է միայն այն խնդիրը, թէ արդեօք որքան իրաւացի են վարւում ծնողները խառնուելով որդիների ամուսնական ընտրութեան մէջ։ Ծնողները լ՝ հարկէ որդու բարին կամենալով, աշխատում են որ նա ամուսնանալ ալնպիսի աղջկայ հետ, որը նախ տարիքով իրանից ջահիլ է, բացի այդ՝ գեղեցիկ և, աղքատ չէ, բարոյապէս մաքուր է և այլն։ Հեղինակը կարճառոտ բացատրութիւններով ցոյց է տալիս, որ ծնողները իզուր են պնդում փիշեալ պահանջների վերայ, որովհետև նախ՝ տարիքի աւել կամ պակաս լինելը մեծ անբաղդութիւն չէ, երկրորդ՝ ծնողների աչքին տգեղ երևացող աղջիկը կարող է երիտասարդին սիրուն երևալ, երրորդ՝ աղքատութիւնը արատ չէ և այլն։ Միւս կողմից հեղինակը քանի մի դէպքեր է պատմում, որոնք ցոյց են տալիս, թէ շատ անգամ որդիները անբաղդանում, նոյն իսկ զոհւում են, ինքնասպանութիւն գործում, եթէ ծնողները չեն համաձայնում նոցա թոյլատրել ամուսնանալ «արտի սիրածի» հետ։

Կատարելապէս ուղիղ են հեղինակի բացատրութիւնները և առհասարակ համակրելի է նորա պահանջը, թէ ծնողները չը պէտք է յամառութեամբ ընդդիմանան երիտասարդի կամքին և պիտի չ՝աշխատեն ստիպմամբ փոխել երիտասարդի արած ընտրութիւնը։ Մենք միայն կ՝աւելացնէինք, թէ երբեմն երիտասարդի ընտրութիւնը կարող է մինքան շտապովի և անխոհեմութեամբ կատարած լինել, որ ծնողները չեն կարող մէջ չը խառնուել, եթէ չեն ցանկանում հարազատ որդու ապագայ անբաղդութիւնը։ Մենք համաձայն ենք, որ ծնողները պիտի չը ստիպեն, չը յամառեն, չը բռնանան երիտասարդի կամքի վերայ, չը կաշկանդեն նորա զգացմունքը և միտքը, բայց որ նոքա բոլորովին չը հետաքրքրուեն հարազատ որդու ամուսնական ընտրութեան հարցով, այդ հազիւ թէ կարելի է պահանջել։

Եւ մի ուրիշ նկատողութիւն։ Հեղինակը իւր գրքոյկով պիտի ոչ միայն ծնողներին յորդորէր, այլ և միւս կողմից երիտասարդներին բացատրէր, թէ ոնքա խելացի և խոհեմ ընտրութիւն անելուց յետոյ բնաւ պարտաւոր չեն ծնողների կամ ազգականների կամքին չափից դուրս նշանակութիւն տալ։ Դուք հասունացած և ինքնուրոյն տղամարդ էք և սիրում էք անկեղծ և գիտակցաբար։ ուրեմն էլ ինչ առանձին կարիք ունէք ձեր ծնողների, հօրեղբայրների և մօրաքոյրների համաձայնութեան մէջ։ Դնալ ջուրը ընկնել, ինչ է թէ սիրուհին զանազան քաւիների և մեռելների քմքին համեմատ չէ, վերին աստիճանի անմտութիւն է։ Այդպիսի քայլ անելու համար անհրաժեշտ է ապուշ լինել։ Իսկ զարգացած և ինքնաճանաչ երիտասարդը այս դէպքում անուշադիր կը թողնէ թէ ազգականներին և թէ նոցանից ապաւած ժառանգութիւնը և սեփական աշխատանքի վերայ վստահանալով իւր կեանքը կը սկսէ «արտի ընտրածի» հետ։

Ս. Թ.